

Միրիմանյան Ա.

Մկրտչյան Բ.

Երևանի պետական համալսարան

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԳՈՐԸՆԹԱՅՈՒՄ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐԻ
ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

ԱՍՓՈՓՈՒՄ

Հոդվածում ուսումնասիրվում է բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառման անհրաժեշտությունը՝ որպես ուսումնական գործընթացի արդյունավետության բարձրացման միջոց: Ներկայացված է ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառելիության արդյունավետությունը ուսանողի արդյունավետ ուսումնական գործունեության ձևավորման համատեքստում:

Բանալի բառեր՝ ուսուցման պասիվ մեթոդներ, ակտիվ և ինտերակտիվ մեթոդներ, ուսուցում, ուսուցման գործընթաց, կրթական գործընթացի մոտիվացիա:

ABSTRACT

METHODS OF TEACHING ORGANIZATION AND PROMOTION OF THE LEARNING
PROCESS IN HIGHER EDUCATIONAL INSTITUTIONS

The article focuses on the necessity of introduction of modern methods of teaching in higher educational institutions as a means of increasing the productivity of the learning process. The effectiveness of the use of active and interactive methods is revealed by the context of the students' effective educational activities.

Key words: passive teaching methods, active and interactive teaching methods, learning, learning process, motivation of educational process.

РЕЗЮМЕ

МЕТОДЫ ОРГАНИЗАЦИИ ОБУЧЕНИЯ И СПОСОБЫ ПОВЫШЕНИЯ

ЭФФЕКТИВНОСТИ УЧЕБНОГО ПРОЦЕССА В ВЫСШИХ УЧЕБНЫХ ЗАВЕДЕНИЯХ

В статье исследуется необходимость внедрения современных методов преподавания в высших учебных заведениях как средство повышения продуктивности процесса обучения. Представляется эффективность применения активных и интерактивных методов обучения для становления активной образовательной деятельности студента.

Ключевые слова: пассивные методы обучения, активные и интерактивные методы преподавания, процесс преподавания, мотивация процесса обучения.

Ժամանակակից սոցիալ-տնտեսական պայմանները պահանջում են ոչ միայն բարձր որակավորում ունեցող մասնագետներ, այլև այդ օրինակ մասնագետների պատրաստման համապատասխան պայմաններ, որոնք պետք է ապահովեն բարձրագույն ուսումնական հաստատությունները: Վերոնշյալ խնդրի լուծումը նոր պահանջներ է դնում բարձրագույն ուսումնական հաստատությունների առջև, ինչը ենթադրում է ուսուցման գործընթացի ռազմավարական և մարտավարական փոփոխություն:

Ուսուցման գործընթացը կրթական համակարգի սուբյեկտների՝ մանկավարժների, ուսանողների, ինչպես նաև ենթակառուցվածքների նպատակառոտ դրված գործունեությունն է, որը կյանքի է կոչվում նախապես մշակված ծրագրերի միջոցով: Այն ենթադրում է ոլորտի ուսումնասիրում և փորձի փոխանակում, մասնագիտական հմտությունների ձևավորում ուսումնական գործընթացի մոտիվացիայի գիտակցման և կիրառման միջոցով, ինչպես նաև բնատուր և ձեռքբերովի ունակությունների կիրառում, գիտելիքի վրա հիմնված հմտությունների ապահովում:

Ուսանողի գլխավոր բնութագիրը մասնագիտական կարողությունն է, դրա կիրառումը նորարարական գործունեության մեջ: Դրանում է դրսևորվում ժամանակակից կրթական համակարգում երկու սուբյեկտների՝ ուսուցանող-ուսուցանվող՝ «դասախոս-ուսանող» հարաբերությունների վերափոխումն առավելին

Ֆորմատիվ բնույթի, ինչը ենթադրում է գիտելիքների փոխարկում գործունեության: Ներկայացված գործընթացի արդյունավետությունը պայմանավորված է մի շարք հանգամանքներով, որտեղ կարևորվում է ուսանողի դերը՝ նրա ճանաչողական ակտիվությունը, մոտիվացիան, ստեղծագործական մտածողության զարգացումը, ինտելեկտուալ գործունեության կառավարումն ու գաղափարների գեներացիան: Մերօրյա ուսուցման խնդիրների լուծումը հնարավոր է միայն ուսումնական գործընթացում ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ, ինչը ենթադրում է ուսուցման ավանդական և նոր ձևերի համադրում: Այս ամենը կնպաստի մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացմանը: Կախված մանկավարժական իրավիճակներից և դրա համատեքստում ձևավորվող խնդիրներից՝ ընտրվում են համապատասխան մեթոդներ: Հետևապես մանկավարժական տեխնոլոգիան՝ որպես մեթոդների և միջոցների ամբողջություն, կառուցակարգվում է նոր գաղափարների հիման վրա, մոդելավորվում կախված բովանդակությունից հաշվի առնելով դասավանդման տևողությունը կամ ժամերի քանակը, առարկայի առանձնահատկությունները, ուսումնասիրվող թեման, կիրառվող մեթոդները:

Մանկավարժների կողմից կիրառվող ուսուցման ժամանակակից մեթոդները կարելի է դասակարգել ըստ երեք տեսակների՝ պասիվ, ակտիվ և ինտերակտիվ (փոխներգործուն), որոնցից յուրաքանչյուրին հատուկ է առանձին բնութագրիչների, պայմանների և իրավիճակների առկայություն:

Պասիվ մեթոդը ենթադրում է մանկավարժի կողմից սահմանված թեմատիկ այով ավանդական եղանակով նյութի հաղորդում: Այս համատեքստում դասախոս-ուսանող հարաբերություններում գերակա դիրքում դասախոսն է, ով, ըստ կրթական հին հարացույցի, ինֆորմացիայի եզակի աղբյուր է, որը, գործառնության մեջ դնելով իր մասնագիտական ունակությունները, դասախոսությունը «հասցնում է» ուսանողներին; Վերջիններս հանդես են գալիս պասիվ լսողի, ընկալողի և վերարտադրողի դերում: Այստեղ կորչում է ուսանողի ինքնաբացահայտվելու, ինքնափրացվելու կարողությունը Որպես կանոն՝ այս մեթոդի արդյունքների ստուգման համար հիմք են ծառայում թեստերը, ստուգողական աշխատանքները: Ժամանակակից աշխարհում առկա

հսկայական տեղեկատվության պայմաններում գրեթե անհնար է դասախոսի կողմից ուսանողներին այդ ամենը փոխանցելը: Ասվածի համատեքստում էլ նշված մեթոդը ուսումնական գործընթացում գրեթե անարդյունավետ է: Սակայն եթե դասընթացը միտված է ծանոթանալուն, օրինակ հիմնական հասկացությունների, տերմինների ուսումնասիրությանը, ապա այս մեթոդը առավել արդյունավետն է: Բացի այդ, այս մեթոդը ենթադրում է նաև քննարկումների բացակայություն, ինչը խնայում է դասախոսի ժամանակը և հնարավորություն է ընձեռում հնավորինս լայն տեղեկատվություն փոխանցել:

Ակտիվ և ինտերակտիվ մեթոդներն, ի տարբերություն նախորդ խմբի, ենթադրում են ուսանողի ակտիվ մասնակցություն ուսումնական գործընթացին, հմտությունների ձեռքբերում, որոնք հիմնված են անձամբ ուսանողների կողմից հավաքագրված տեղեկատվությամբ: Ըստ Ս. Ի. Օժեգովի բառարանի՝ համոզվում ենք, որ «ակտիվ» հասկացությունը մեկնաբանվում է որպես գործուն, էներգիայով լի (Наумкин Н.И., Грошева Е.П., Фролова Н.Н., 2010; Ожегов С. И., Шведова Н. Ю., 28-33): Ասվածից հետևում է ուսանողների ակտիվություն՝ որպես ինտենսիվ ուսումնական գործունեություն, իսկ դասախոսներինը՝ ինտենսիվ մանկավարժական գործունեություն: Ուսումնական գործընթացի երկու սուբյեկտներն էլ՝ ինչպես դասախոսները, այնպես էլ ուսանողները, շահագրգռված են ուսանողի ճանաչողական գործունեության զարգացմամբ՝ որպես ուսումնական գործունեության գործիքակազմ: Դա ենթադրում է ինքնուրույն ստեղծագործական մտածողություն, գիտելիք ձեռքբերելու ցանկություն, տեղեկատվության ակտիվ փնտրտուք, խնդիրների լուծման սեփական ուղիների որոնում, քննադատողականություն:

Ինտերակտիվ («inter»՝ փոխկապակցված, «act»՝ գործունեություն) նշանակում է փոխգործակցել, գտնվել շփման մեջ: Ինտերակտիվ մոտեցումը սովորողների ուսումնական գործունեության տեսակ է, որը ենթադրում է ինտերակտիվ մեթոդով դասիվարում: Ինտերակտիվ մոտեցման հիմնաքարը ինտերակտիվ վարժություններն ու խնդիրներն են, որոնք լուծվում են ուսանողների կողմից:

Ինտերակտիվ մեթոդները միտված են ուսումնա-ճանաչողական գործունեության ակտիվացմանը դասախոսի հետ փոխգործակցության միջոցով: Երկխոսության համատեքստում խնդիրների լուծման եղանակը ենթադրում է հետադարձ գործընթացի կանոնակարգում, որը դասախոսի կողմից պարտադիր բնույթ չի կրում: Նման օրինակ մեթոդների կիրառումը կապ կամ երկուդողորդված գործունեություն է՝ հարց-հարցադրում- պատասխան: Այս մեթոդի կիրառումը հնարավորություն է տալիս սովորողին բացահայտել իր պոտենցիալ հնարավորությունները, լրացնել հատուկ ունակությունները և որպես արդյունք՝ ձեռք բերել կարողություններ և հմտություններ: Երկխոսության համատեքստում նրանք սովորում են լսել և լսելի լինել, վերլուծել այլոց կողմից արտահայտված մտքերը, զարգացնել մասնագիտական ունակությունները, բացահայտել սեփական բնատուր հմտությունները: Բացի այս, ինտերակտիվ մեթոդի կիրառումը հնարավորություն է ընձեռում ուսանողներին դրսևորել ունակությունները, որոնք հետագայում հիմք կհանդիսանան անձի լիարժեք ձևավորմանը, ինքնաբացահայտմանը և կայացմանը:

Ակտիվ և ինտերակտիվ մեթոդների կիրառումը դասախոսից պահանջում է ուսանողների տարիքային և անհատական առանձնահատկությունների հաշվառում, ինչպես նաև խթանող պայմանների ստեղծում: Այս ամենը մոտիվացնում է ուսանողին՝ նպաստելով ուսուցման գործընթացի նկատմամբ հետաքրքրության առաջացմանը:

Այս մեթոդներին հատուկ տեխնոլոգիաների հետ մեկտեղ կիրառվում են նաև զարգացնող, խնդրային, հետազոտական, որոնողական և այլ տեխնոլոգիաներ, որոնք միտված են ուսանողների «թաքնված» ներքին ունակությունների բացահայտմանը:

Ներկայացնենք մի շարք մեթոդներ, որոնք բարձրացնում են բուհական համակարգում ուսուցման արդյունավետությունը և դրդում ուսանողներին ձեռք բերելու նորանոր գիտելիքներ:

Խնդրային ուսուցում, երբ ուսանողի կողմից նոր գիտելիքները ձեռք են բերվում այս կամ այն խնդրի լուծման, իրավիճակի կարգավորման միջոցով: Ընդ որում այս փուլում ուսանողների ճանաչողական գործունեությունը՝ դասախոսի հետ

համագործակցության նհամատեքստում, առավել մոտենում է հետազոտական գործունեության: Խնդրի լուծումը ուսանողը գտնում է փնտրման, խմբավորման և վերլուծության մեթոդներով:

Այս մեթոդի կիրառումը ենթադրում է դասախոսի կողմից խնդրային իրադրության ստեղծում, ուսանողների ներգրավում դրա վերլուծության և լուծման գործընթացին: Նպատակն այն է, որ ուսանողներն ինքնուրույն գան այն եզրահանգումներին, որոնք իրականում պետք է ներկայացնեն դասախոսը: Սակայն սա չի ենթադրում դասախոսի անգործություն, այլ հակառակը, նա հանդես է գալիս ուղղորդողի դերում՝ օգնելով ուսանողներին գտնելու խնդրի ճիշտ լուծումը: Այս մեթոդի արդյունավետությունն այն է, որ զարգանում է ուսանողների ճանաչողական գործունեությունը՝ տալով վերջինիս որոնողական բնույթ, ինչը ձևավորում է ստեղծագործական հմտություններ:

Հաջորդ արդյունավետ մեթոդը **նախագծային** մեթոդն է, որը ենթադրում է ուսանողների ճանաչողական գործունեության, ստեղծագործական հմտությունների և քննադատական մտածողության զարգացում, ինքնուրույն կառուցակարգման և տարածական կողմնորոշման ունակությունների ձևավորում: Նախագծային մեթոդը հիմնված է փոխգործակցության և համագործակցության վրա, որոնք միտված են ուսանողների՝ որպես ինքնուրույն ակտիվ սոցիալական էակների ձևավորմանը: Սա ենթադրում է, որ ուսանողը ակտիվ սուբյեկտ է ոչ միայն ուսուցման գործընթացում ,այլև հասարակական տարբեր հարաբերություններում:

Այսպիսով, ակտիվ մեթոդների կիրառումը ուսումնական գործընթացում ենթադրում է անձի սոցիալականացում, սոցիալական տարբեր դերերի ստանձնում՝ կազմակերպիչ, լիդեր, կատարող և այլն:

Ընդհանրացնելով փաստենք, որ պասիվ մեթոդները նպաստում են ռեպրոդուկտիվ ունակությունների զարգացմանը: Ակտիվ և ինտերակտիվ մեթոդները մեծ մասամբ ազդում են սովորողների ստեղծագործական մտածողության, որոնողական և հետազոտակա նունակությունների զարգացման, խնդիրների լուծման գործընթացում նրանց ներգրավման, մասնագիտական հմտությունների խորացման, պրակտիկ հմտությունների ձեռքբերման վրա: Դրսևորելով և զարգացնելով սեփական

ունակությունները և անձնային որակները, գիտակցելով ինքնակրթության և ինքնադաստիարակության կարևորությունը՝ ուսանողները դառնում են ուսումնական գործընթացի ակտիվ մասնակիցներ՝ ունակ ինքնագնահատման և ինքնակազմակերպման:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Берденникова Н. Г., Меденцев В. И., Панов Н. И.** (2006), Организационное и методическое обеспечение учебного процесса в вузе: учебное пособие. Серия: Новое в высшем профессиональном образовании. – СПб.: Д.А.Р.К. – 208 с.
2. **Беспалько В. П.** (1995), Педагогика и прогрессивные технологии обучения. – М.: Изд-во ИРПО МО РФ, – 336 с. 8
3. **Наумкин Н.И., Кондратьева Г.А.** (2015), Модульная структура общетехнических дисциплин, направленных на подготовку студентов к инновационной деятельности // Сборник публикаций научного журнала «Глобус» по материалам III международной научно-практической конференции: «Психология и педагогика: Актуальные вопросы» Санкт-Петербург: сборник статей (стандартный уровень, академический уровень). – СПб., – С. 25-28.
4. **Наумкин Н.И., Грошева Е.П., Фролова Н.Н.** (2010), Подготовка студентов национальных исследовательских университетов к инновационной деятельности на основе компетентностного подхода // Интеграция образования. -. - №4 (61). – С. 28-33.
5. **Ожегов С. И., Шведова Н. Ю.** Толковый словарь русского языка [Электронный ресурс]. – Режим доступа: <http://www.ozhegov.info/slovar>.

Սկրտչյան Քրիստինա- ք.գ.թ., դոցենտ, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն, էլ. փոստ՝ k.mkrtchyan@ysu.am

Միրիմանյան Սուսաննա - դասախոս, ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետ, անգլերենի թիվ 1 ամբիոն, էլ. փոստ՝ s.mirimanyan@ysu.am

Ներկայացվել է խմբագրություն՝ 16.11.20, տրվել է գրախոսության՝ 23.11.20 - 02.12.20, երաշխավորվել է ԵՊՀ եվրոպական լեզուների և հաղորդակցության ֆակուլտետի անգլերենի թիվ 1 ամբիոնի կողմից, ընդունվել է տպագրության՝ 18.12.20: